



ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԱՎԻԱՅԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

«17» Տեպրեբ 2023թ.

ՀՐԱՄԱՆ N 101-շհ

«ՉԱՐԼԻ ԷՅՐԼԱՅՆԱ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ («ՍԱՅՓՐՈՒԽ ԷՅՐՎԵՅՍ») ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 29-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ «2» ԿԵՏՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 6-ի թիվ 1005-Ն որոշման N 1 հավելվածի 19-րդ կետով, հիմք ընդունելով Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի 2022 թվականի օգոստոսի 23-ի N 413-Ա հրամանը և հիմք ընդունելով «Չարլի Էյրլայնս» ՍՊ ընկերության («Սայփրոա Էյրվեյս») 2023 թվականի փետրվարի 24-ի հայտը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Չարլի Էյրլայնս» ՍՊ ընկերությանը («Սայփրոա Էյրվեյս») (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրել Լառնակա/LCLK/-Երևան/UDYZ/-Լառնակա/LCLK/ երթուղով՝ 2023 թվականի մարտի 26-ից մինչև 2023 թվականի հոկտեմբերի 28-ը՝ շաբաթական 4 (չորս) չվերթ հաճախականությամբ Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություն:

2. Սահմանել, որ սույն հրամանի 1-ին կետով նախատեսված չվերթները համարվում են Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի 2022 թվականի օգոստոսի 23-ի N 413-Ա հրամանով տրված թույլտվության շրջանակներում Լառնակա/LCLK/-Երևան/UDYZ/-Լառնակա/LCLK/ երթուղով իրականացվող չվերթների շարունակությունը (ԻԱՏԱ) 2023 թվականի ամառային նավիգացիոն ժամանակահատվածում՝ 2023 թվականի մարտի 26-ից մինչև 2023 թվականի հոկտեմբերի 28-ը՝ շաբաթական 4 (չորս) չվերթ հաճախականությամբ, որոնք բավարարում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով նախատեսված պայմանների, չսպասարկված ուղղությունների և չվերթների հաճախականությունների պահանջներին և որոնց վրա տարածվում է Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի 2022 թվականի օգոստոսի 23-ի N 413-Ա հրամանի 2-րդ կետով նախատեսված արտոնությունը:

3. Օդային տրանսպորտի միջազգային ասոցիացիայի (ԻԱՏԱ) ձմեռային ժամանակահատվածի մասով արտոնության վերաբերյալ դրույթները կսահմանվեն առանձին հրամանով՝ Ընկերության կողմից ներկայացվող հայտի հիման վրա:

4. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի օդային փոխադրումների կարգավորման վարչության պետին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանով նախատեսված թույլտվության հանձնումն Ընկերությանը:

5. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի օգնականին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի և թույլտվության տեղադրումը Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կայքում:

3/17/2023

X 

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN MIHRAN 3308540266 ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ 025/2023
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

PERMISSION 025/2023
TO THE FOREIGN AIRCRAFT OPERATOR FOR SCHEDULED AIR
SERVICES OPERATION TO, FROM AND WITHIN THE TERRITORY OF THE REPUBLIC OF
ARMENIA

Օդանավ շահագործողը Aircraft Operator	«Չարլի Էյրլայնս» ՍՊԸ («Սայփիրուս Էյրվեյս») «Charlie Airlines» LTD (“Cyprus Airways”)
Օդանավի (օդանավերի) տիպը (տիպերը) Type(s) of aircraft(s)	A320
Հաճախականությունը Frequency	շաբաթական 4 չվերթ 4 flights per week
Երթուղին Air route	Լառնակա/LCLK/-Երևան/UDYZ/-Լառնակա/LCLK/ Larnaca/LCLK/-Yerevan/UDYZ/-Larnaca/LCLK/
Թույլտվության գործողության ժամկետը Permission validity	26/03/2023 մինչև 28/10/2023 26/03/2023 till 28/10/2023

3/17/2023

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
CHAIR OF THE
CIVIL AVIATION COMMITTEE
MIHRAN KHACHATRYAN

X 

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN MIHRAN 3308540266



17.03.2023
(տալու ամսաթիվը)
(date of issue)